


Այս հոս ալ արտայայտեց Ռուսաստան իր կատարեալ ապականութիւնը, երբ հրատարակեց թէ աւելի կը նախընտրէ հազարներ մոր թեւ տալ քան քանի մը միլիոն ֆրանք հատուցում: Հոս ալ ցուցուց, որ Շայյօքը ձարօնը չէր, այլ ինքը միապետական ղեկավար, որ պարզապէս բռնադատուեցաւ խաղաղութիւն հաստատելու եւ այս րոպէիս զգուշման հետեւ կը ցուցնէ: Օրինակ կողմէ՞ք վերջին խօսքիս:— ահա, աշխարհի ամէն անկիւններէն շնորհաւորագրեր կը թափին խաղաղութեան լիազօրներուն եւ պ. Ռուզվելիի, Սակայն Վիթթէ շնորհակալութեան և գոհունակութեան բառ մը իսկ անաս չէ ոչ մարտի եւ ոչ ալ Լամարտիէն, թէ եւ սոյն տողերը սրբազան պատ. ն 48 ժամ անցած է համաձայնութեան վրայ:

Մեծ է ճշմարտութիւնը որ Ռուսաստանի գաւկերներն ներկայ ցնդութիւնը, բայց, ի գոհոր որ երկարատեւ պիտի չըլլայ այդ, Միւնչիտ Թօքիօի վրայ ինկող յուսահատեան վարագործը չուտով կը կը խոստանայ վերնալ եւ ազգային մեծ ու նուիրական սօսի մը փոխելի:

Թէ ի՞նչ դիրք պիտի բռնէ ռուս միապետութիւնը իր հարածական ժողովրդին հանդէպ ապագային, յայտնի չէ տակաւին, սակայն, դատելով խընդիրը «Սահմանադրութեան» ու «Բարլամենտի» առատաձեռն պարգեւէն, հեռապատկերները շատ բարեգուշակ բաներ չեն խոստանար: Օրէ օր աճող յուզումները, օրէ օր բազմապատկող գազանութիւնները արիւնտ ուրուակներ միայն կը բերեն մեզի: Սպասենք ժամանակի հաւատարիմ վկայութեան:

Մ. ՅՈՒԱԿ



ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

(-0-0-)

ՊՕՍԹՕՆ: 9 Օգոստ. 1905(*)

Սիրելի գաղափարակիցս պրն. Վարդօ,

Քանիցս մտադրած էի ձեր անկողնակալութեան համար իմ շնորհակալութեամբ յայտնել զէթ նամակաւ մը, սակայն կոպտէի տեսնել նաև թէ մեր այստեղի շնորհը ինչ դիրք պիտի բռնեն, արդեօք պիտի հերքէ՞ն ձեր գրածները: Իայց տեսնելով որ ցարգ ու է շշուկ չի բարձրացաւ ուստի կատարելապէս համոզուած ձեր ըսածներու ճշմարտութեան կողմէ իմ երախտագիտութիւնս յայտնել ձեզ որ «Նար. Ժուժի» միջոցաւ մեր միջնիւ այսօր Սուրբ ճանչրցած մարդոց գիմակը վար առնելով անոնք իրենց իսկական զոյնով մեզ ներկայացուցին, որ այլեւս անցեալին պէս չի խարուինք ու մեր արիւնքը տիրեցող ձեռք բերած լուծաւնրով ձրիակերներու փոքր շուռ ճացնենք: Թէպէտև գեռ տեղս կը պտնուին այնպիսի ընկերներ որ գեռ ձեր գրածները իրենց գլուխը չեն մտնէր և կը մտածեն թէ ստոնք ոչ զաղափարական և ցնդած մարդոց խօսքեր:

(*) Մ. Ս.— Վասմեանից պահանջում ենք «Շարժում»-ի մասին սուսած խօսքերի կամ հերքումը, կամ հաստատում, որովհետև իրեն ասելիք ունենք սուղարկում ենք իր բացատրութիւնների մէջ Սասունի եւ ձարոնացիների կորստների համեմատութեան չափով չը ղեկավարի...

են, սակայն ես որ այս վերջին մի քանի արուայ ընթացքին մէջ ըստ բաւականին գործօն գերատեսնած եմ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ: ու իմ աչքիս առաջ կը տեսնեմ թէ ինչ զեղծումներ և օյինպազուծութիւններ կը խաղան այս տեղի գործիչ ըսուած մարդուկները, չէի կարող չի հաւատալ թէ ձեր գրածին և թէ ալ աւելիին: Իայց խնդրեմ աւագէք ի՞նչ կէրպով կարելի է այս ամենի առաջն առնել, քանի որ . . . ի նման հացկատակները պատրաստ են ամեն ստորնութիւն յանձն առնել, որպէսզի իրենց պետերու գահը չի խախտի ու իրենք չը զրկուին իրենց հացէն: Ես Ընդհ. ժողովէն ալ ու է յոյս չունիմ, քանի որ այդտեղ պիտի երթան . . .

ն. րու պէս մարդիկ և կարգ մը անկոչ հրեւեր որոնք իրենց ազաններու ըսածները դեղահատի պէս կը լաննելով ձեռք բարձրացնելու դերը միայն պիտի կատարեն: Ծեղս հաւածանքը սկսած է գէպ ձեզ և մասնաւորապէս գէպ «Նարժում»-ը, ես որ ժամանակին պրն. . . Նէն կը գնէի այժմ ստիպուած եմ Լինի իմ մէկ բարկամէս առնուլ ու կարգալննցեալ օր Վասմեանին հարցուցի թէ նարժում կը կարգաւ և ի՞նչ է իրեն գաղափարը այս վերջի 5 6 յօդուածներու մասին: նա անամօթաբար պատասխանեց թէ: «Նարժում»-ը դադարած է, այլ ևս չի հրատարակուիր: . . . և երբ հս իմ մօտ գտնուածը սուղարկեցի իրեն կարգալ, նա մերժեց կարգալ և

ինձ ըսաւ: Ինձ չ' նայէ, այդպիսի փողոցային գրութիւնները կարգացողը չէ կարող Դաշնակցական լինիլ: Օ՛ր Աստուած իմ, ինչ որբրու մնացինք, ժամանակ մը պարպականդա՞ կընէին որ ուրիշ կուսակցութեանց պատկանող գրութիւններ չի կարգանք, հիմակ ալ կարգիւն մեզ չի կարգալ թերթ մը որ մեր գոյութեան մէջ մեծ գերբը է կատարեր և այսօր կուգայ փրկել զմեզ այն սպառնացող վտանգէն որը թերեւս պատճառ լինի մեր կազմակերպութեան քայքայմանը: Անշուշտ իրենք կարող են ազգել այնպիսի ընկերներու վրայ որոնք Ան Բ. էն պատելու շնորհքը չունին, և ամեն ինչ որ Վասմեաններու քերէն կելլէ իրենց համար երկնային պատգամ է: Թերեւս շատ ցաւալի է տեսնել Դաշնակցութեան գործերը եւ թարկուած այս աննախանձելի գրութեան, սակայն յուսանք որ մօտիկ ապագան բարի պտուղներով պսակէ մեր յոյսերը: նամակս վերջացնելէ առաջ չի մոռնամ քանի մը խօսքով բացատրել թէ ինչպիսի մարդիկ են Ասմերիկայի Կ. կոմիտէի անդամները որ «Նարժում»-ի այս վերջի չին թիւը կարգացի և Ձեր նկարագրած Պալքանեան Կ. կոմիտէի հետ բաղդատութեան դրի բնաւ տարբերութիւն չի գտոյ անոնց մէջ: Հիմակ այստեղ թէ Կ. կոմիտէ, թէ գործիչ, թէ խրմբագիր, թէ պրոպագանդիստ բառերը կը կայանան մէկ անձնաւորութեան մէջ: «Վասմեանի» եթէ ու է զիտակից ընկեր յանդգնի պղտիկ դիտողութիւն մը

րոյ գործը, միեւնոյն ատեն կը իրմիջէր: «Այդուհանդեր որքեր ունին ու երկնքի թռչունները բոյներ, սակայն Աստուծոյ որդին գլուխը հանգչեցնելու տեղ մը չունէր»: Իր ազնի վերաբերմունքը եւ ազնուագոյն գգուանքները չափէն աւելի հաճոյալի էին, բայց, չը կրցայ այլ ևս զսպել ինքզինքս ու նետելով բազուկներս պարանոցին շուրջը, քանի էն վրաս ծածկէր ըսի:—Միթէս, եկու՛ր ու Դեֆիից մօտը նստէ, ես քուն չունիմ ու խիստ միայնակ կը գգամ:

— Իայց Դեֆիս, ո՞վ պիտի սպասէ ու հսկէ Արամբարանի գաղութը: Մինչ չեւ որ փեսան չըգայ, Միթէն պէտք չէ որ մրտփէ ու քնանայ Ո՞վ իմ Դեֆիս, Արամբարանի գաղութը մեծ գայլէն ո՞վ պիտի պաշտպանէ:

Աւելի մօտս քաշեցի զնի ու թոյլ չը տուի որ հեռանայ, Գլուխս գոգին մէջ հանգչեցուցի: Միթէս փոփոսցի, մեր հայրերուն Աստուածը, որ իր Դաւիթ ծառան արջէն ու առեւձէն փրկեց, կը պաշտպանէ մեզ:

Նրկա՛ր ժամանակ յոյնք միասին, Ապա, գլուխս իր մայրական գրկին մէջ դնելով՝ քնացայ: Ու աստղերը մեզ կը գիտէին:

մըն էի ու անոր ընկերը Միթէիս ուկորները կը ծածէր...

ԳԼ Դ.

ԳԻՇԵՐԱՄԷՉԻ ԹԱՓՈՐԸ

Վերջապէս գալ չէր այդ լոկ գիշերային ահաւոր մղձաւանջ մը: Սակայն Միթէի ձեռքը թեւերուս վրայ էր Զիս կարթնցնելը: Մտեցողի մը ոտնաձայնը կը լսուէր:

— Ահա Արամբարանի կողմայ, գոչեց էն իկա, ելի՛ր: Դեֆիս, ու զինքը գիմաւորելու երթանք:

Բայց հիմա բոլորովին արթուն էի ու կոպուիեան լիովին գիտակից Մատներս չըթուէքներուն դրի անհամբերութիւնը զսպելու համար Քանի մը րոպէ վերջ՝ որոշակի կը լսէինք հարթվայրին վրայ քայլունբուն իուլ գոփուները, որոնք արագօրէն մեզ կը մոտենային:

— Արամբարանը, Արամբարանը, փոփոսց Միթէն:

— Լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ... պէտք է հանգարտ կենանք, ո՞վ ըլլալին չենք գիտեր—Թուրքեր կրնան ըլլալ:

— Աստուած իմ, ճնաց Միթէն, ու անջեւս փոռուեցաւ: Անոնք պէտք է նախ Միթէն սպաննեն:

— Միայն հանգարտ կեցիր: Անոնք երբէք չեն կրնար տեսնել մեզ և ո՛չ ալ կակնկալեն այսպիսի տեղ մը ու է մէկը գտնել պատասխանեցի ցած ձայնով:

Հակառակ անվեհեր խօսքերուս, սիրտս արագօրէն կը բարախէր, ու Միթէն, զիս իր թեւերուն մէջ մտցնելու չափ սեղմած՝ բարձրի տեւրելի նման կը զողոզէր: Մեզ համար այլ եւս ամէն ակնկալութիւն վերջացած էր, եթէ եկողներուն թուրքը լալը ստուգէինք կամ յայտնուէինք անոնց: Ցակաւ առ տակաւ կը մտեանային, ու հիմա, գիշերային լուսութեան մէջ, իրենց երգելը կը լսէի: Եղանակը ծանօթ էր: Ուշագլուծեալ մտիկ ըրի, Արդեօք ականջներս կը խաբէին զիս: Մեր հին ւագային ելգն էր այն—երգ մը, իրենց տիրողը համար մեռնող նահատակներուն այլևնով մեր հոգիներուն նուիրուած:

— Աւրախու թի՛ւն, ուրախութի՛ւն գոչեցի, ոտքի ցաակելով մեր հայրենակիցներն են, Միթէ փրկուած ենք... Ու անմիջապէս զիլ ձայնս յստակօրէն հնչեց:

Հիթանոս մը չեմ գտնար, կամ ստորով մը չեմ ըլլար: Ի՞նչ չը գտնեմ Գրիստունէի հանգրուան

Պիտի գտնեմ Գրիստունէի գերեզման:

Ցակաւին տողերս չէի աւարտած՝ երբ յանկարծ զազար առաւ յառաջացող խուճըրը: Հիմա բոլորովին մեր մօտն էին անոնք:

— Աղջկան մը ձայնն է, ըսաւ մէկ կր: «Հայ աղջիկ մը»... գոչեց ուղիքը: «Պէտք է գտնել զնի», վրայ բերուէրրորդը: «Պիտի երթամ ըսաւ միւս մը հեղինակաւոր ձայնով ու թաւուտին մէջէն տեսայ որ վերջին խօսողը թամփին վրայէն վար ցատկելով մեր սպասած կէտին մտեցաւ: Յուզումնաբէս սարսուղով Միթէի ձեռքը բռնեցի:

— Եկու՛ր, ըսի, զինքը ղէպի բացուածքը առաջնորդելով:

— Տէ՛րն է, փոփոսց:

Հարցումը անպատասխանի մնաց: Ծիչդ առջեւնիս կանգնած էր մեր ազատի՛չը: Լուսնին ստգոյն լոյսը իր գեղատիպ ղէպին և համազգեստին վրայ իջնելով՝ Միթէն հազիւ թէ նրկատած էր, երբ վայրագօրէն «Թուրք մը, թուրք մը» ճչալով գետին փռուեցաւ:

(Շարունակելի)

ընել իրեն և կամ կուսակցու- թեան մէջ տեսնուած թերու- թեան մը դէմ, նախ կուսակցու- արտաքսել և յետոյ դուռն մեզի հետ գործ չունիս կըսեն, մենք շատ խօսող ընկեր չենք ուզեր ըսելով կը հեռացնեն, Անցեալ օր փոքրիկ բախխում մը ունե- ցանք Վասմեանին հետ այս գոր- ծերու նկատմամբ, վստահ նմ որ այդ շատ սուղի պիտի նստի վրաս- սակայն ինչ որ ալ լինի Անկեղ- ծութիւնը կը պահանջէ կտրիճի պէս կանգնիլ մինչեւ գործերը իրենց օրինաւոր կարգին կա- զան :

Ա. Ն.

Յ Ա Մ Ա Ռ

(Յ Ի Մ Ա Ր)

«Ներքին չէ՛ անհատներու վրայ խօսելը ընդհանուր է մասնաւոր իջնելու է» Բարդախաւսու

Երբեմն այնպէս կը կարծուէր թէ, ո՛վ որ յամառի կամ պնդէ ո՛ր և է մի խնդրոյ մասին նա շատ բան գիտէ, նկարագրի տէր է ի մի բան ամենայն ինչ է — խոշոր մի գերօ:

Բարեբախտաբար շուտ վրայ հասած լուրջ ուսումնասիրութիւնները և դրական գիտութիւնները եկան հզօ- րապէս հաստատեցին թէ, այսամոռ- թիւնը բացարձակապէս յիմարու- թիւն է, զի կրթեք գիտուն մէկը իրեն թոյլ չը տար ո՛ր և է նիւթի մասին յամառիլ կամ պնդել :

Պրօֆս. Պաստէօր որ մեծ գիտուն մ'էր իւր բոլոր գիւտերը հարելու որ փորձերէ վերջ կը յայտնէր. նա իսկ թոյլ չէր տար իրեն իւր գիւտերի մասին յամառիլ, այսպէս նաև ուրիշ մեծ դէմքեր, որոնց ամենն ալ յա- մառութիւնը նկատած են մարդուն նկարագրը սքզգացնող մի վատ ու- նակութիւն՝ յոռի և թերի կրթու- թեան հետեւանօք ալ խոր պրօպագ- անդ ևն. ևն :

Մարդիկ ընդհանրապէս չորս գը- խաւոր տեսակ խառնուածքներով ի- րարմէ կը զանազանին: Արիւնային, ջղադին մաղձային և աւալային: Գի- տութիւնը մեզ կը սովորեցնէ թէ, յամառութիւնը աւալային ստոր կազ- մուածքի մէկ զիլիատոր և մասնաւոր յատկութիւնն է, ուստի շատ մեղադ- րելի չէ կիթ աւալային կաղմուածքով յամառ՝ յիմար մէկը պատահմամբ մեզ վշտացնէ, բաղդատմամբ ուրիշ խառ- նուածքներու, ուստի ամեն գնով զգուշանալու ենք այդ ստոր խառ- նուածքն ունեցողներէն, նոյն իսկ աղջիկ տալ առնելէ :

Ժամանակի գիտութիւնը իսկ իւր որջ չափովը մուտք չէ կարող գտնել այդ ստոր խառնուածքի կամ կազմի մէջ, այսինքն թէ հազուադէպ է տես- նել վերին աստիճանի զարգացեալ և աղնիւ մարդ այդ խառնուածքի տակ- երբ պատահիք, զգուշացէք անտա- րակոյս վտանգաւոր են. անշուշտ այս կազմի տեղեկութիւնը մասնանշիլ ու- զած է սա խօսքը՝ «գ ե գ ե ց ի կ հ ո- գ ի, գ ե դ ե ց ի կ մ ար մի ո յ մ է ջ» Փափաքելի է որ ամեն տեղի մեր կրթական գործերով պարսպող ազ-

գայիներն ալ այս տեսակ նիւթերու մասին քիչ թէ շատ գաղափար ունե- նան. և երբ շատերը ամենագէտ լի- նելու հովեր կառնեն ու կեղծեն ման կա՛վար թակա կան դրու- թեամբ մարգեալ ուսուց- ցիչներ փնտաւելու, մոռնալով ամենազիլաւորն, ուստի այդ կարգի պաշտպօղոց քաղաքայիններուն կուզենք յիշեցնել թէ, մանկա- վար թակա կան դրու թեան ա- մենագէլխաւոր և ամենաէ- ա կան պահանջներն ամեն- նա առաջինն է, շնաւ միշտ գտնել շնորհալի դէմքով, շարժուածքով և խօսուած- քով ուսուցիչներ, որ կարենան ազ- դել իրենց խոզներուն վրայ, (ազ- դել երկնքի չը հասկցուի, այլ սովորեցնել) այլ ո՛չ թէ թա- Յայա կան և կամ հէ մ շ է ի ա- կան կեղտոտ նկատմանէ թելադ- րուած մեզ պողատող ապիկար տի- րացուին կամ ժամկոչին, եւ կամ թէ պատահած ձրիակեր և ցաւագար կամ ջլախաւոր մէկուն, որուն գոյու- թիւնը վաղուց անէացած է իսկու- թիւնը անորոշացած, միտքն ու խելքն ունած իսկ ինքը ամբողջ մարմնով տգեղ մտածութիւնի հալու մաշ լեղած. խղճացէք այդպիսիներու պոյու թեանը վրայ և փութացէք ատաղնորդի զայն օր առաջ հիւանդանոց, այլ ո՛չ երբէք, և երբ էք ազդի զպրօց զի այդ շէնքը չէ յիմարանոց. Պր. վարիշներ. ազգի փրկութեան գործը, ազգային մանկուոյն լաւ գաստիարակութեան կախում ունի. յիշեցէք անգամ մը ձեր պաշտօնի մեծութիւնը և սոսկացէք զի ազգին ապագայ ճակատագրին հետ է որ կը խաղաք, ուստի խլճմտօրէն կատա- րեցէք ձեր բարոյական պարտակա- նութիւնները, որ իսկապէս ազգովին երախտապարտ մնանք Ձեզ :

1 Սեպտ. 1903 ՅԱՐՕ Ք է օ ս թ է ն է ց

Հ Ա Մ Լ Է Թ Ի Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ո Ւ Ս Ը

— 0 —

Ամսի 27-ին Շարաթ երեկոյեան ծանօթ ողբերգու արւեստագէտ պ. Կ. Գալֆեան տեղւոյս թատերասէր- ներու և թատերասիրուհիներու բա- րեհաճ մասնակցութեամբ պիտի ներ- կայացնէ Շէքսպիրի հռչակաւոր Հիմ- Լէ՛ԴԸ :

Կը խնդրուի յարգելի հասարակու- թիւնէն որ իրենց ներկայութեամբ պատուեն սոյն ներկայացումը, Տոմ- սակները այսօրուրէն կը ծախուին ժամը 4-6 Սասուն սրճարանը. իսկ ներկայացումն օրը թատրոնում, ներկայացումը պիտի սկսի ժամը ճիշդ 8-ին առանց նկատի ունենալու ներ- կաներու թիւը :

ԿԸ ՓՆՏՈՒՄԻ

Յովհաննէս Պալուսեան անուն անձը 35-36 տարեկան ֆիզի քաղա- քէն 8 տարիի չափ Պոլիս մնացած եւ Պանք Օթոմանի ցոյցէն ամիս մը ետքը Պոլսէն մեկնած Աստրաքի աղջկան մը հետ միասին. ժամանակ մը Պուլկարիոյ վառնա քաղաքը մնա- ցած, անկէ Բուսանիա անցած է ժա- մանակ մըն ալ հոն անցունելէ ետքը

ուր երթալը չը դիտցուիր. եթէ գիտ- ցողներ կան ուր ըլլալը եւ կամ հաս- ցէն թող հաճին իմացնել իմբագրու- թեան ինչու որ երկու եղբայրները Յովսէփ եւ Պողոս Պոլուսեան Ամե- րիկայէն կը փնտոեն զինքը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

18 օգոստոսին Ջիւնիայէն Պոլիս կը հեռագրեն որ հայ յե- ղափոխականները օգը հանած են յունաց եկեղեցի մը, օթէլ մը :

Հայերու շարդ տեղի ունեցե- ր է :

— 19ին կը հեռագրեն որ Ջիւնիայի ֆրանսական հիւպա- տոսարանին մէջ ծառայող հայու մը տուններէն միոյն մէջ ումը ներ գտեր են :

— Նոյն թուականին կը հա- ղորդեն որ Ջիւնիայ աները ժողովրդին կողմէն բարձրացու- ցած պատէշներով կը պաշա- պանուին :

— Քայսէրի և այլ տեղերու կոտորածները և հայ յեղափո- խականներու կողմէն իբր թէ ե- չած փորձերը կը հերքուին :

— Թուրք զօրք արապ ապս- տամքները յաղթելով նէմէնի մայրաքաղաք Սանսն կրկին գրա- սեր է :

— Սուլթանի տարեգարձը Պոլ- սոյ մէջ շատ տխուր կերպով կա- տարուեր է, որովհետեւ նոր փոր- ձերէ վախ կայ եղեր :

— Սուլթանը որոշած է մեր- ժել Մակեդոնիոյ ելևմտից մի- շաղաքային քօնթրօյ : Եւրո- պական թերթերը կը յայտարա- րեն որ մերժման պարագային մեծ պետութիւնները Անգլիայի և Ֆրանսայի պիտի յանձնեն քօնթրօլը ընդունել տալու :

Ո Ռ Ի Ս Ի Ա

Օգոստոս 22ին Բեթերպուրկէն կը հեռագրեն որ կովկասի Շուշի (Ղարապաղ) քաղաքէն ստացուած հեռագիր մը կը հաղորդէ հե- տեւեալը :

— Օգոստոս 16ին խոզովութիւն ներ սկսան բաղաժիտ մէջ. հա- յերը յանկարծակի կը յարձակին իրենց թաղը ապրող թուրքե- րուն վրայ և կայրեն 40 տուն և շարք կուտան :

Հին թագաւորող խաներուն մէկ ժառանգը հարիւր մահմետա կաններու զլուխ անցած կեր թան հայոց թաղը շարդին վերջ տալու և հայերը զսպելու համար Բայց ատոնք ալ հայերու յար ձսկմանը կենթարկուին, շատերը կը վիրաւորուին, մէկ քանին ալ գերի կ'իյնան :

Գանձակի նահանգապետն ալ

Շուշի երթալով, հայերէն կը վի- րաւորուի :

Մահմետականները որոնք թի- ւով հայերէն քիչ են զիւղերէն օգնութիւն կատանան և կրկին կը յարձակին հայերուն վրայ : Ջար- ցը և հրդեհը կը շարունակուի :

Թիֆլիզէն զօրք և թնդանօթ- ներ զրկուեր են Շուշի :

ԱՆԳԼԻԱ

Անգլիական թերթերը մեծ հիացում կը յայտնեն Ճարոնի թէ ֆիզիքական և թէ բարոյա- կան յաղթանակին առթիւ :

— 19 օգոստոսին Լօնտօնէն կը հեռագրեն, յուլիս 30ին ստո- րագրուած է Անգլո ճարոնական դաշնագրութիւնը հինգ տարուան ժամանակով : Բովանդակութիւնը գաղտնի կը պահուի, բայց հի- մակուրէն յայտնի է որ դաշնա- գրութիւնը կապահովէ երկու պետութեանց շահերը Մայրաքոյն Արեւելքում, ու եթէ դաշնակից- ներէն մէկուն վրայ մէկ պետու- թիւն իսկ յարձակի, միւսը պար- տաւոր է միջամտել :

Երկու կողմերն ալ կապահովեն Քօրէյայի և Չինաստանի անկա- խութիւնը :

ՃԱՐՈՆԻ ԶԻՋՈՂՈՒՄԵԱՆ ՊՕՏՃԱՌԸ

«Մաթէն» կը հաղորդէ որ ճա- րոն զիջած է, որովհետեւ Չինէն պիտի ստանայ Հանկան—Քան- թօնի երկաթուղիի գծին քօն- սէսիան որ Ռուսիան գնած էր 37 ու կէս միլիոն ռուպլիի : Չինաս- տան այդ զիջումը պիտի ընէ Ճարօնի իբր շնորհակալութիւն սր ան Ռուսիոյ ուժը թուլացուց Մանչուրիոյ մէջ :

Այդ քօնստօնը քաղաքական և առեւտրական մեծ նշանակու- թիւն ունի, որովհետեւ Ճարօ- նի կամաց կամաց իր ձեռքը պիտի առնէ Չինաստանի բոլոր երկաթուղիները :

Ճ Ա Բ Ո Ղ Ի Ա

Ժողովուրդը և թերթերը դժ- գոհ են հաշտութեան պայման- ներէն : Մինչեւ անգամապատմ- րութիւն բռնկեր է :

— Ռուս «Նաչա ժիզն» թերթը կը հաղորդէ որ ռուսական զօրքը Սիպերէն չը պիտի հեռանայ. զօրաբաժիններու հրամանատար- ները հրահանք ստացած են օ գոստոսին ըստ սովորականին զինուորներ շարձակել պահեստի համար : Այդ կարգադրութիւնը մեծ յուզում առաջ բերած է :

— Կըսուի թէ Ռեյթի կոմսու- թեան տիտղոս պէտք է տրուի և ան պիտի ըլլայ նոր կապուելիք գահլիճին պետը :